բաւացիօրէն եւ հին պատգամի ճանապարհին ընկած բոլոր նահատակներին անդորրութիւն մաղթել իրանց բացօդեայ կամ հողաչէն դերեզմաններում :

«Թող այդպէս լինի» :

Եւ Դ. Անանունի գիրքը կը վերջանայ այդ պաթեթիկ «ամէն»ով :

«Թո՛ղ այդպէս լինի»...

Բայց մենք չենք թողնի, որ «այդպէս լինի» : Մենք չենք թողնի, որ հայոց պատմութիւնը խարդախուի, թէկուզ յանուն սրբազան մարքսիզմի ու պրոլետարիատի... Մենք չենք թոյլ տայ, որ Հայաստանը կործանողները, Էնվէրի ու Քեմալի դաշնակիցները հանդէս գան հայ ժողովրդի ազատարարի դերում, իսկ անձնուէրները լէգէոնը, նա որ երեսուն տարի տապալուեր է բռնակալութեան քուրաներում՝ հասցնելու համար հայ դատը 1918-ի օրերուն՝ նետուի թեթեւ սրտով «չահագործողներու» եւ արտօնեալներու բանակը»...

Հայ մարքսիստները շատ կը խօսին «շահագործումի» ու «շահագործողներու» մասին եւ չեն գիտեր, թէ որքան անխղճօրէն իրենք կը շահագործեն — քա՛ն տարիէ ի վեր — հայ ժողովրդի համբերութիւնը եւ իրենց փոքրաթիւ համախոհներու միամտութիւնը :

Տրամաբանութիւնը — շատոնց գիտենք այդ — անոնց սիրած զէնքերէն չէ : Տրամաբանութեամբ չի կարող պարծենալ մանաւանդ Դ. Անանունը : Հոս ականատես ենք անոր մէկ ճըշմարիտ salto mortale-ին : Վայրկեան մ'առաջ, Դաշնակցականի մը ոգեւորութեամբ, նա խունկ կը ծխէ հին, դարաւոր պատգամին, որ «իրականացաւ 1918-ին», կը ներբողէ հայոց ազատութեան ու անկախութեան պայքարները,— վայրկեան մը յետոյ այդ պայքարներու ղեկավարները, «հին պատգամի» մարդիկ եւ ամենէն առաջ Դաշնակցականները կը յայտնուին «արտօնեալներ», «խարդախութեան ու շահագործման շաւղով» ընթացողներ :

Այդպէս կ'որակուի Արամի, Ռոստոմի ու Մուրատի կուսակցութիւնը, որ 1918-ի աննախընթաց ճգնաժամի օրերուն հոգի ու մարմին հաղորդեց «հին պատգամին» եւ իրապէս խոյական թռիչքներով իրականացուց անկախ Հայաստանը...զոր յետոյ կործանեց Անանունի խնկարկած ռուս բանուորութիւնը :

Այս արդէն, ինչպէս ֆրանսացին կ'ըսէ, փոքր ինչ չափազանց է...

Դժուար է ըմբռնել հեղինակի այս տրամաբանական ոստումը, անգամ եթէ զինուած լինինք մարքսիզմի բոլոր նրբութիւններով :

Ո՞վ իրականացուց, վերջապէս, «հին պատգամը» : Ո՛չ հայ մարքսիստները, ապահովաբար : Բայց վերջինները կը պատասխանեն.

— Ո՛չ ալ Դաշնակցականներն էին,— հայ ժողովուրդն էր :

Հանգուցեալ Ղազարոս Աղայեանը կը սիրէր զինքը Հնչակեան անուանել եւ հակառակ առոր, Դաշնակցական պատուիրակները հոգաբարձական ու այլ ընտրութիւններու ատեն, մեծամասնութիւն կազմելով, միշտ անոր ձայն կուտային, ի նշան իրենց յարգանքի դէպի սիրուած վեթերանը : Եւ երբ կատակով կը հարցնէինք իրեն՝ «Ղազարո՛ս, ո՞վ ընտրեց քեզի», կը պատասխանէր.

— Ժողովուրդը :

Լաւ գիտէր, որ այդ ժողովուրդը Դաշնակցութեան կը հետեւէր եւ որ առանց վերջինի հաւանութեան, ինքը երբեք չպիտի ընտրուէր, բայց յամառօրէն չէր ուզեր ընդունել այդ :

Շատ չատերը, հակառակորդութեան ոգով տարուած, կը խուսափին Դաշնակցութեան անունը տալէ, անգամ այնպիսի պարագաներում, երբ բացայայտ է, որ այդ կուսակցութիւնը ամբողջ գործի առանցքը կը կազմէ :

Բայց երբ աղէտ ու ձախորդութիւն կայ — օ՜, այն ատեն անվերջ կը խօսին Դաշնակցութեան մասին, անվերջ կը քաշքշեն անոր անունը : Դրական, հայրենաշէն գործերու մէջ Դաշնակցութիւնը — չկայ : Լռութեան դաւ մը կայ անոր շուրջը : Բայց ձախորդութիւններու, աղէտներու ատեն — ան մեն-մենակ է հրապարակի վրայ, որպէս պատասխանատու եւ քաւութեան նոխազ...

Այդպէս կը տրամաբանէ սովորական ամբոխը. բայց կան պատմութեան փիլիսոփաներ, որոնք շատ ալ հեռու չեն ամբոխէն :

Ո՞վ վարեց եկեղեցական գոյքերու կռիւը :

— Ժողովուրդը :

Ո՞վ կազմակերպեց ու վարեց հայկական